

Դանիել Վարուժան

Անդապահը

– «Եհե՛. եհե՛. արտերուն մեջ մարդ մարդաձայն չը մըտնե՛»:
Հովեուն հետ սարեն եկող անդապահին աղաղակն է:

Ուսըննդանութ պարկը կախած և մասրենի ցուպ մը ձեռքին՝
Ցորյաններու զըմրուխտին մեջ կը թափառի ան առանձին:

Արևներուն մեջ կը լողա ինչպես ամրան իշամեղուն:
Աչքերուն մեջ կը ծավալի կականչ երազը դաշտերուն:

Գիշերը մերթ սարին նըստած լուսինին դեմ կ՝ածե սըրինգ.
Խրտվիլակը ցանքին մեջեն, միակ ընկեր, կը լսե զինք:

Երգերուն տակ անդորրական հասկերն համայն կը ծոցվորին.
Կը կատաղի՝ երբոր զանոնք իր թևին տակ լըլկե քամին:

Ան սարսափն է բոլոր անոնց՝ որ կ՝ավրեն անդ ու անդաստան.
Կը խըռովեն շողքն արևուն, կը կոխկըրտեն հացը վաղվան:

Ի՛նչ խլուրդներ ըսպաննած, և պնդագլուխ ի՛նչ գոմեշներ
Հարվածներեն իր ճարահատ ճահիճներն են ապաստաներ:

Ան դեռ երեկ քաղվորներու չըքնաղ երամ մ՝հալածելով՝
Հարսի մը ոտքը ջախջախեց սատկած իշու մ՝հաղթ ծնոտով:

Յատուկ Պոէմ

Ու սարին վրա միշտ հովերո՛ւն, հովերո՛ւն հետ կ՚աղաղակե.
— «Եհե՛. եհե՛. արտերուն մեջ մարդ մարդաձայն չը մըտնե՛»:
